




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ԵՎ ԳՐՈՂ ՍԱՄՎԵԼ ԹՈՒՄԱՅԱՆԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՍԱՄՈՒԷԼ ԹՈՒՄԱՅԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ,
ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Նիւ-Եորք

Մեզի համար միսիթարական է, որ մեր պանդուխտ ժողովուրդի ծոցին մէջ փոքր չէ թիւը Մեր հարազատ զաւակներուն, որոնք իրենց կենդանի ու եռանդուն գործնէութեամբ նեցուկ կը հանդիսանան մեր սուրբ եկեղեցւոյ անասանութեան, մեր նուիրական աւանդութեանց պաշտպանութեան ու հալ ոգեկանութեան պահպանման, անմահանց հաւատարմութեամբ ամենայն հայրոց սուրբ Էջմիածնի և մեր վերածնած մայր հայրենիքի հանդէպ:

Այդ հոյլին պատկանող մեր հարազատներէն եղաք նաև Դուք, սիրելի պրն. Թումայեան երկար տարիներու Ձեր հանրօգուտ և եկեղեցանուէր ծառայութիւններով ու Ձեր գրական-հրապարակախօսական գործնէութեամբ: Ձեր կեանքը ամբողջ ու Ձեր վաստակը արդար, նուիրաբերում մը եղան ի խնդիր մեր պանդուխտ ժողովրդի հոգևոր ու ազգային ինքնագիտակցութեան ամրապնդման ու զարգացման: Եւ Մենք վստահ ենք ու աղօթող, որ տակաւին բազում տարիներ Դուք պիտի շարունակէք ընթանալ նոյն նուիրումի ճանապարհով, սիրովը և յարգանքովը շրջապատուած ամբողջ ամերիկահայութեան:

Արդ, ի գնահատումն Ձեր երկարամեայ բեղմնաւոր մշակութային ու հասարակական գործնէութեան, այլև ընդառաջելով թեմակալ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի և «Վարդանանց Ասպետաց» կազմակերպութեան բարեպաշտ միջնորդութեանց, այսու Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը յղենք օրհնութիւն աստուածային Փրկչի Իջման սուրբ սեղանէն, աղօթքով ջերմ, որ Տէրը Ձեզի պարգևէ կայուն քաջատուջութիւն

և խաղաղ աշխատանքի արևշատ երկար տարիներ ընտանեկան երջանկությամբ:

«Ողջ լերուք գորացեալ սուրբ Հոգով և յաւէտ օրհնեալ ի Տեսնէ և ի Մէնջ». ամէն:

Կարյ Ջե Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 15-ն մայիսի
1978 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԵ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 888

